ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 49/6

29-ը հունվարի 2021 թվականի

ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին ԵՊՀ գիտական խորհրդում դոցենտի գիտական կոչում ստանալու համար երաշխավորելու և միջնորդելու մասին:

Հաշվի առնելով, որ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ. ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, ղեկավարվելով ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին դոցենտի գիտական կոչում ստանալու համար:
2. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ ԵՊՀ ԻՄ-ի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ/պ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լիանա Հարությունյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈԿ:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ